

# ԲՈՒՀԻ ՀԵՇԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՍՈՒԹՅՈՒՆ

2024

## ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### ԹԵՍ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Զեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-զրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-զրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնայով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մադրում ենք հաջողություն:

**1** Որո՞նք են նախակորիզավորներ.

- 1) Վիրուսները
- 2) սնկերը և բույսերը
- 3) նախակենդանիները
- 4) բակտերիաները և կապտականաչ ջրիմուռները

**2** Որտե՞ղ են զարգանում ծաղկավոր բույսերի փոշեհատիկները.

- 1) առէցների փոշանոթներում (փոշերներում)
- 2) վարսանդի սերմնարանում
- 3) վարսանդի սոնակում
- 4) էնդոսպերմում

**3** Ինչպե՞ս է իրականանում պլանարիայի շնչառությունը.

- 1) քոքերով
- 2) խոլիկներով
- 3) տրախեաներով
- 4) մարմնի մակերևույթով

**4** Ի՞նչ բաժիններ են տարբերում ձկների ողնաշարում.

- 1) պարանոցային, կրծքագոտկային, սրբանային և պոչային
- 2) պարանոցային, իրանային և պոչային
- 3) կրծքագոտկային և պոչային
- 4) իրանային և պոչային

**5** Ի՞նչ հաջորդական փուլերով է ընթանում միջատների թերի կերպարանափոխությունը.

- 1) հասուն միջատ, ձու, հարսնյակ, թրթուր
- 2) հասուն միջատ, թրթուր, ձու, հարսնյակ
- 3) ձու, հարսնյակ, հասուն միջատ
- 4) ձու, թրթուր, հասուն միջատ

**6**

**Մարդու օրգանիզմում որտե՞ղ են գտնվում զգայական նեյրոնների մարմինները.**

- 1) տեսաթմբում, ողնուղեղի սպիտակ նյութում և առջևի արմատիկում
- 2) ողնուղեղից դուրս ողնուղեղային հանգույցներում
- 3) ողնուղեղի կողմնային եղջյուրներում և գործառող օրգաններում
- 4) ողնուղեղի գորշ նյութի առջևի եղջյուրներում

**7**

**Մարդու ո՞ր գեղձի հորմոնի անբավարարությամբ է պայմանավորված լորձայտուց հիվանդությունը.**

- 1) ուրցագեղձի
- 2) մակերիկամի միջուկային շերտի
- 3) վահանաձև գեղձի
- 4) մակերիկամի կեղևային շերտի

**8**

**Մարդու զլխուղեղի մեծ կիսազնդերի կեղևի ո՞ր բլում է գտնվում տեսողական գոտին.**

- 1) ճակատային
- 2) ծոծրակային
- 3) գագարային
- 4) քունքային

**9**

**Ի՞նչն է նպաստում արյան դանդաղ մակարդմանը.**

- 1) ցածր ջերմաստիճանը
- 2) կալցիումի իոնների մեծ խտությունը
- 3) հեպարինի բացակայությունը
- 4) K վիտամինի առկայությունը

**10**

**Որտե՞ղ է մարդու սրտում գտնվում եռափեղկ փականը.**

- 1) առրտայի ներսում
- 2) վերին սիներակի մուտքի հարևանությամբ
- 3) աջ նախասրտի և աջ փորոքի բացվածքի սահմանում
- 4) ձախ նախասրտի և ձախ փորոքի բացվածքի սահմանում

**11** **Ո՞ր հյուսվածքն է կազմում մարդու կմախքային մկանների հիմքը.**

- 1) Էպիթելայինը
- 2) հարթ մկանայինը
- 3) շարտակցականը
- 4) միջածիգ զոլավոր մկանայինը

**12** **Ի՞նչն է կլլման ժամանակ կանխում սննդագնդիկի թափանցումը մարդու շնչափող.**

- 1) շնչափողի վերին աճառային կիսաօղակը
- 2) մակլոկորդը
- 3) լորձաբաղանքի ծալքերը
- 4) վահանաճառը

**13** **Ի՞նչ հիվանդություն է առաջանում A վիտամինի անբավարությունից.**

- 1) ցինգա
- 2) ռախիտ
- 3) բերի-բերի
- 4) հավկուրություն

**14** **Մարդու մաշկի ո՞ր շերտում են գտնվում մազարմատները.**

- 1) մելանին սինթեզող մահացած բջիջների շերտում
- 2) վերնամաշկում
- 3) ենթամաշկային բջջանքում և էպիլերմիսի մահացած բջիջների շերտում
- 4) բուն մաշկում

**15** **Ինչե՞րն են գտնվում մարդու երիկամի միջուկային շերտում.**

- 1) պատիճը և բրգաձև կազմավորումը (փոքր բաժակը)
- 2) ծնկաձև և հավաքող խողովակները, առբերող և արտատար անոքների միջև գտնվող մազանոթային կծիկը
- 3) բրգաձև կազմավորումները (փոքր բաժակները)
- 4) երկերտ պատիճները

**16** Ի՞նչ է բնորոշ ոչ պայմանական ռեֆլեքսներին.

- 1) անհատական են
- 2) ժառանգվում են
- 3) ձեռքբերովի են
- 4) ժամանակավոր են

**17** Ո՞ր շարքում են թվարկված միայն միաշաքարներ.

- 1) զյուկողը, ցելյուլոզը, ռիբոզը
- 2) ռիբոզը, դեօքսինիբոզը, քսիլոզը
- 3) ֆրուկտոզը, ռիբոզը, օսլան
- 4) գալակտոզը, գլիկոզենը, քսիլոզը

**18** Ո՞ր շարքում է ճիշտ նշված ՌՆԹ-ի նույնառություններից մեկի կազմությունը.

- 1) ուրացիլ - դեօքսինիբոզ - ֆոսֆորական թթվի մնացորդ
- 2) աղենին - դեօքսինիբոզ - ֆոսֆորական թթվի մնացորդ
- 3) ուրացիլ - ռիբոզ - ֆոսֆորական թթվի մնացորդ
- 4) թիմին - ռիբոզ - ֆոսֆորական թթվի մնացորդ

**19** Պասիվ տեղափոխություն է.

- 1) նյութերի տեղափոխությունը ցածր խստության տիրույթից դեպի բարձր խստության տիրույթ
- 2) նյութերի տեղափոխությունը բարձր խստության տիրույթից դեպի ցածր խստության տիրույթ
- 3) արտաքին էներգիայի հատուկ աղբյուր պահանջող նյութերի տեղափոխությունը
- 4) ցիտոզը

**20** Նախակորիզավոր քաղցներում ռիբոսոմների ֆունկցիան է.

- 1) ԱԵՖ-ի սինթեզը
- 2) նյութերի փոխադրումը
- 3) ֆոտոսինթեզը
- 4) սպիտակուցի սինթեզը

**21** Էռուկարիոտիկ բջջում ԱԵՖ-ի սինթեզը հիմնականում տեղի է ունենում.

- 1) միտոքոնդրիումներում
- 2) ռիբոսոմներում
- 3) էնդոպլազմային ցանցում
- 4) Գոլջիի ապարատում

**22** Ֆոտոսինթեզի լուսային փուլում ի՞նչ գործընթացներ է հրահրում արեգակնային ճառագայթման էներգիան.

- 1) ածխաջրերի առաջացում
- 2) մոլեկուլային թթվածնի և ածխաջրերի առաջացում
- 3) ածխաջրերի և ատոմային ջրածնի առաջացում, ԱԵՖ-ի սինթեզ
- 4) մոլեկուլային թթվածնի առաջացում, ԱԵՖ-ի սինթեզ, ատոմային ջրածնի առաջացում

**23** Սիստիկ բաժանման ո՞ր փուլում է վերականգնվում կորիզաքաղաքանքը.

- 1) պրոֆազում
- 2) թելոֆազում
- 3) անաֆազում
- 4) մետաֆազում

**24** Ո՞րն է անսեռ բազմացման եղանակ.

- 1) պարբենոգենեզը
- 2) բողբոջմամբ բազմացումը
- 3) կոնյուգացիան
- 4) բազմացումը բեղմնավորման միջոցով

**25** Ինչպես է կոչվում անհատական զարգացման ընթացքում օրգանիզմի նոր հատկանիշներ ձեռք բերելու հատկությունը.

- 1) գենոտիպ
- 2) ֆենոտիպ
- 3) ժառանգականություն
- 4) փոփոխականություն

**26**

Ինչի՞ է հավասար դեղին գույնի հարք սերմեր ունեցող ոլորի հնարավոր գենոտիպերի թիվը.

- 1) երկուսի
- 2) երեքի
- 3) չորսի
- 4) իննի

**27**

Ո՞ր գեներն են կոչվում շղթայակցված.

- 1) մեկ քրոմոսոմում գտնվող գեները
- 2) առատոսոմների տարբեր գույգերում գտնվող գեները
- 3) հնմոլոգ քրոմոսոմների տարբեր գույգերում գտնվող գեները
- 4) սեռական քրոմոսոմների նույն լոկուսներում գտնվող գեները

**28**

Ինչո՞վ է պայմանավորված ցիտոպլազմային ժառանգականությունը.

- 1) ցիտոպլազմայում գտնվող ռիբոսոմների ՌՆԹ-ի մոլեկուլներով
- 2) ցիտոպլազմա ներթափանցած վիրուսների գեներով
- 3) միտոքոնիումների կամ պլաստիդների գեներով
- 4) կորիզի քրոմոսոմների գեներով

**29**

Ի՞նչ է ինվերսիան.

- 1) քրոմոսմի հատվածի պտույտ  $180^{\circ}$ -ով
- 2) հնմոլոգ գույգից մեկ քրոմոսմի անհետացում
- 3) քրոմոսմի հատվածի կորուստ
- 4) քրոմոսմի հատվածի ձեռքբերում

**30**

Ինչպիսի՞ ձևեր են առաջանում երկիխերողիզոտ առանձնյակի և հոմոզիզոտ դոմինանտ առանձնյակի խաչասերման արդյունքում՝ երկու ալելներով ել լրիվ դոմինանտության և գեների անկախ բաշխման դեպքում.

- 1) 2 ֆենոտիպային և 4 գենոտիպային
- 2) 1 ֆենոտիպային և 4 գենոտիպային
- 3) 2 ֆենոտիպային և 2 գենոտիպային
- 4) 4 ֆենոտիպային և 4 գենոտիպային

**31**

**Ի՞նչ երևոյթ է լույսի ազդեցության տակ կարտոֆիլի պալարի կանաչելը.**

- 1) մուտացիոն փոփոխականություն
- 2) աղապտիվ փոփոխականություն
- 3) ոչ աղապտիվ փոփոխականություն
- 4) սեղոնային փոփոխականություն

**32**

**Ո՞րն է իդիոադապտացիայի օրինակ.**

- 1) ճերքին քեղմնավորման ի հայտ գալը
- 2) կատվածկների մարմնի տափակացումը
- 3) երկենցաղների եռախորշ սրտի առաջացումը
- 4) ողնաշարավոր կենդանիների հնգամատ վերջույթների առաջացումը

**33**

**Ո՞րն է կենսածին էկոլոգիական գործոն.**

- 1) քամին
- 2) զիշատչությունը
- 3) օրվա տևողությունը
- 4) մթնոլորտային ճնշումը

**34**

**Սև առնետները, որոնք նախկինում ապրում էին Եվրոպայի բնակավայրերում, որուս մղվեցին մոխրագույն առնետների կողմից: Սա փոխարարերությունների ո՞ր ձևն է.**

- 1) ճերտեսակային գոյության կոիկ
- 2) ճերտեսակային մրցակցություն
- 3) միջտեսակային գոյության կոիկ
- 4) պայքար անօրգանական աշխարհի անբարենպաստ պայմանների դեմ

**35**

**Ի՞նչն է էկոհամակարգի առաջնային արտադրանքը.**

- 1) կոնսումենտների կենսագանգվածի աճը միավոր ժամանակում
- 2) հետերոտրոֆների կենսագանգվածի աճը միավոր ժամանակում
- 3) պրոդրոցենտների կենսագանգվածի աճը միավոր ժամանակում
- 4) էկոհամակարգի կենսագանգվածի առաջացման արագությունը

**36**

Ազոտի ո՞ր ձևը անմիջականորեն չեն կարող յուրացնել բույսերը.

- 1)  $N_2$
- 2)  $NO_3^-$
- 3)  $NO_2^-$
- 4)  $NH_4^+$

(37-38) Խաչասերել են  $aaBBCcDdEeFf \times AaBbCCDDeeFf$  գենոտիպերով առանձնյակներ:

Ալելային գեների առաջին երկու զույգերում առկա է լրիվ դոմինանտուրյուն, իսկ վերջին չորսում՝ ոչ լրիվ: Տվյալ հատկանիշները պայմանավորող գեները գտնվում են հոմոլոգ քրոմոսոմների տարրեր զույգերում:

**37**

Գտնել սերնդում հնարավոր գենոտիպերի թիվը.

- 1) 96
- 2) 48
- 3) 64
- 4) 32

**38**

Գտնել սերնդում հնարավոր ֆենոտիպերի թիվը.

- 1) 48
- 2) 24
- 3) 96
- 4) 32

(39-40) ԴՆԹ-ի մոլեկուլի հատվածը կազմված է 13440 նուկլեոտիդներից, իսկ Ա+Թ / Գ+Ց քանակական հարաբերությունն այդ հատվածում հավասար է 1,4-ի:

**39** Գտնել քիմինային նուկլեոտիդների քանակը ԴՆԹ-ի մոլեկուլի այդ հատվածում.

- 1) 1960
- 2) 3920
- 3) 2800
- 4) 1400

**40** Գտնել ցիտոզինային նուկլեոտիդների քանակը ԴՆԹ-ի մոլեկուլի այդ հատվածում.

- 1) 3920
- 2) 1400
- 3) 2800
- 4) 1960

**41** Ո՞ր առանձնահատկությունը (նշված է ձախ սյունակում) ո՞ր օրգանիզմներին (նշված է աջ մասում) է առավել բնորոշ: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

**Առանձնահատկություն**

**Օրգանիզմներ**

- |  |            |
|--|------------|
| A. Էկոհամակարգում ռեդուցենտների դեր են կատարում  | 1. սմկեր   |
| B. բջջապատի հիմնական նյութը խիտինն է             | 2. բույսեր |
| C. Էկոհամակարգում արողուցենտների դեր են կատարում |            |
| D. ունեն հետերոտրոֆ սմնդառություն                |            |
| E. արտազատում են միզանյութ                       |            |
| F. բջիջներում գլիկոզեն է կուտակվում              |            |
| G. բջիջներն ունեն քլորոպլաստներ                  |            |

**42**

Մարդու արյան ո՞ր ձևավոր տարրին (նշված է աջ սյունակում) ո՞ր բնութագիրն է (նշված է ձախ սյունակում) համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Բնութագիր

Ձևավոր տարր

- |  |              |
|--|--------------|
| A. չափսերով ամենափոքրն է   | 1. էրիթրոցիտ |
| B. իրականացնում է գազերի փոխադրումը  | 2. թրոմբոցիտ |
| C. կյանքի տևողությունը 120-130 օր է  | 3. լեյկոցիտ  |
| D. քայլքայման ժամանակ անջատվում է նյութ, որը մասնակցում է ֆիբրինի առաջացմանը |              |
| E. պարունակում է հեմոգլոբին  |              |
| F. ունի երկու կողմից ներհրված սկավառակի տեսք                                 |              |
| G. ընդունակ է ֆազոցիտոզի   |              |

**43**

Մարդու ո՞ր ոսկորը (նշված է ձախ սյունակում) կմախքի ո՞ր բաժնի կազմի մեջ է (նշված է աջ սյունակում) մտնում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Օսկոր

Կմախքի բաժին

- |                |                          |
|----------------|--------------------------|
| A. կող         | 1. ստորին վերջույթի գոտի |
| B. թիակ        | 2. վերին ազատ վերջույթ   |
| C. կոնքոսկը    | 3. իրան                  |
| D. փոքր ոլոր   | 4. վերին վերջույթի գոտի  |
| E. արմունկոսկը | 5. ստորին ազատ վերջույթ  |
| F. կրծոսկը     |                          |
| G. անրակ       |                          |
| H. քաղկոսկը    |                          |

**44**

Սաղմնային գարզացման ընթացքում ո՞ր օրգանը, հյուսվածքը (նշված է ձախ սյունակում) սաղմնային ո՞ր թերթիկից է (նշված է աջ սյունակում) առաջանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Օրգան, հյուսվածք

- A. խոիկների էպիթել
- B. ատամների էմալ
- C. սեռական գեղա
- D. մարսողական գեղա
- E. մաշկի էպիթել
- F. բոքերի էպիթել
- G. մկան

Սաղմնային թերթիկ

1. մեզոդերմ
2. էկտոդերմ
3. էնտոդերմ

**45**

Չափանիշի ո՞ր բնութագիրը (նշված է ձախ սյունակում) տեսակի ո՞ր չափանիշին (նշված է աջ սյունակում) է համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Չափանիշի բնութագիր

- A. նույն տեսակի առանձնյակների ԴՆԹ-ն կողավորում է միանման սպիտակուցներ
- B. առանձնյակների կենսագործունեության գործընթացների նմանություն
- C. քրոմոսոմների քանակի, ձևի, չափսերի նմանություն
- D. տեսակը գոյատևում է միջավայրի միայն որոշակի պայմաններում
- E. յուրաքանչյուր տեսակ զբաղեցնում է խիստ որոշակի արեալ
- F. առանձնյակներն ունեն ներքին և արտաքին կառուցվածքների նմանություն

Տեսակի չափանիշ

1. ֆիզիոլոգիական
2. ձևաբանական
3. կենսաքիմիական
4. աշխարհագրական
5. էկոլոգիական
6. գենետիկական

**46**

Ո՞րն է կաթնասունների ողնաշարի բաժինների ճիշտ հաջորդականությունը՝ սկսած պարանոցային բաժնից: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. կրծքային
2. գոտկային
3. պոչային
4. պարանոցային
5. սրբանային

**47**

Ի՞նչ հաջորդականությամբ են ընթանում սպերմատոզոֆիդի զարգացման պրոցեսները: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. 2n4c հավաքակազմով բջիջների առաջացում
2. սպերմատոզոնիումների բաժանում միտոզի եղանակով
3. սպերմատիդների առաջացում
4. երկու հապլոիդ բջիջների առաջացում
5. սպերմատոզոնիումների թվի ավելացում
6. սպերմատոզոփների ձևավորում

**48**

Ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունենում պրոցեսները՝ բակտերիաֆազով բակտերիայի վարակման ժամանակ: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. նոր բակտերիաֆազերի ձևավորում
2. բակտերիաֆազի ԴՆԹ-ի սինթեզ
3. բակտերիայի ոչնչացում
4. բակտերիաֆազի ԴՆԹ-ի ներարկում բակտերիայի մեջ
5. պոչային ելունների ամրացում բջջաթաղանթին
6. բակտերիաֆազի սպիտակուցների սինթեզ
7. բջջաթաղանթի «լուծում»

**49**

**Ինչպիսի՞ն է պրոցեսների հաջորդականությունը բույսերի օրգանիզմում սպիտակուցի մոլեկուլի առաջացման ժամանակ.**

1. հիդրոֆոր և -S-S- կովալենտ կապերի առաջացում
2. սպիտակուցի տարածական կառուցվածքի առաջացում
3. ջրի և անօրգանական աղերի ներծծում արմատի միջոցով
4. ամինաթթուների միջև ջրածնային կապերի առաջացում
5. ամինաթթուների սինթեզ՝ անօրգանական նյութերից
6. ամինաթթուների միջև պեպտիդային կապերի առաջացում

**50**

**Ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունենում գործընթացները մարդու օրգանիզմում միջավայրի բարձր ջերմաստիճանի պայմաններում: Նշել ճիշտ հաջորդականությունը.**

1. մաշկ մղվող արյան ծավալի ավելացում
2. արտաքին միջավայրի ջերմաստիճանի բարձրացում
3. քրտնարտադրության ուժեղացում
4. մաշկի արյունատար անորոշերի լայնացում
5. ջերմատվության ուժեղացում
6. մաշկի ջերմային ընկալիչների դրդում
7. ջերմակարգավորման կենտրոնի դրդում

**51**

**Ի՞նչ հաջորդականությամբ է արյունն անցնում մարդու արյունատար համակարգի բաժիններ՝ սկսած սրտի աջ փորոքից արտամղման պահից: Նշել ճիշտ հաջորդականությունը.**

1. սիներակ
2. ձախ նախասիրտ
3. բոքային զարկերակ
4. բոքաբշերը պատող մազանոքներ
5. բոքային ցողուն
6. աջ փորոք
7. բոքային երակ

## Նշել բոլոր ճիշտ պնդումները.

- բջիջների մեծ մասում ցիտոպլազմայի ռեակցիան թույլ հիմնային է, որը պայմանավորված է բջջում առկա ջրի մոլեկուլների դիպոլային հատկություններով
- մկանային բջիջների ցիտոպլազմայում պահպանվում է կալցիումի իոնների շատ ցածր խտություն՝ սարկոպլազմային ցանցի շնորհիվ
- գլուկոզի՝ մինչև պիրոխաղողաքքվի ճեղքման արդյունքում անջատվում է 150 կՕ/մոլ էներգիա, որի մեծ մասը (60 %) պահեստավորվում է ԱԵՖ-ի ձևով, իսկ մյուս մասը (40 %) ցրվում է որպես ջերմային էներգիա
- բարձրակարգ բույսերի բջիջներում բացակայում է բջջային կենտրոնը
- շրջակա միջավայրում նատրիումի իոնների պարունակությունն ավելին է, քան կենդանի բջիջներում, իսկ կալիումի իոնների պարունակությունը կենդանի բջիջներում է ավելին, քան շրջակա միջավայրում
- գենետիկական գաղտնագիրն օժտված է ավելցուկայնությամբ, քանի որ նույնականացնելու մեջ եռյակը կարող է կոդավորել 1-6 ամինաքքուների

## Մարդու ենթաստամոքսային գեղձին վերաբերող ո՞ր պնդումն է ճիշտ: Նշել բոլոր ճիշտ պնդումները.

- ենթաստամոքսային գեղձի հյութն անգույն է և օժտված է թթվային հատկությամբ
- ենթաստամոքսային գեղձը խառը գեղձ է, որն արտազատում է մարսողական հյութեր և արյան մեջ ներզատում է գլյուկագոն հորմոնը
- ենթաստամոքսային գեղձի արտատար ծորանը բացվում է բարակ աղու վերջնամասում
- ենթաստամոքսային գեղձը կազմված է զիսիլիկ, մարմնից և պոչից
- ենթաստամոքսային գեղձն արտադրում է սպիտակուցները, ճարպերը, ածխաջրերը, նուկլեինաքքուները ճեղքող ֆերմենտներ
- ենթաստամոքսային գեղձը տեղակայված է գոտկային երկրորդ ողի մակարդակում

## Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. տրամախաչման շնորհիվ առաջանում են գեների նոր զուգակցություններ, որի արդյունքում սերնդում առանձնյակների ժառանգական հատկությունների նույնականությունը ծնողական առանձնյակի ժառանգական հատկությունների հետ ավելի է մեծանում
2. տրամախաչումը տեղի է ունենում մեյոզի առաջին բաժանման պրոֆազում կոնյուգացիայի ընթացքում
3. ♀. Սենդեկի երկրորդ օրենքը կոչվում է նաև դոմինանտման օրենք
4. համաձայն Ծ. Մորգանի՝ պտղածանմի երկիետերոզիզոտ էզի և ռեցեսիվ հատկանիշներով արուի խաչասերման արդյունքում առաջին սերնդում ստացվում է միակերպություն
5. գերդոմինանտության դեպքում հետերոզիզոտ (Աա) վիճակում դոմինանտ հատկանիշն ավելի ցայտուն է դրսորվում, քան հոմոզիզոտ դոմինանտ (ԱԱ) գենոտիպի դեպքում
6. բոչունները, սողունները օժտված են արական հոմոզամետությամբ

## Նշել բոլոր սխալ պնդումները.

1. բնական ընտրությունն ուղղորդում է էվոլյուցիային
2. միկրոէվոլյուցիան ավարտվում է նոր տեսակի առաջացմամբ
3. միմիկրիա է կոչվում հարմարվածության այն տեսակը, երբ կենդանու մարմնի գունավորումը նման է շրջապատի գույներին
4. կայունացնող ընտրության դեպքում պոպուլյացիայի գենոֆոնդը չի փոփոխվում
5. ազդոցենոզներում խախտված է բնական հավասարակշռությունը, նյութերի շրջապատույտը
6. նավթը, հողը, կրային ապարները դասվում են հանքային նյութերի շարքին
7. ամենսալիզմը միջտեսակային փոխարաբերությունների ձև է, որի դեպքում մի տեսակն օգտագործում է մյուսի ներկայացուցիչներին որպես սննդի աղբյուր և հաճախ նաև որպես բնակության միջավայր

**56**

## Նշել մարդու օրգանիզմի վերաբերյալ բոլոր սխալ պնդումները.

1. ականջի և աչքի ընկալիչներից նյարդային ազդակներն ուղարկվում են երկարավուն ուղեղ, ապա ուղեղաբնով հասնում տեսաթմքի համապատասխան կենտրոններ
2. միջին ուղեղը ապահովում է կմախքի մկանների լարվածությունը
3. հոտառության ընկալիչները տեղակայված են քրի խոռոչի վերին հատվածում և ըստ բնույթի քիմընկալիչներ են
4. սրտի աշխատանքը դանդաղեցնում են ացետիլխոտինը և կալիումի իոնները
5. արիեստական ակտիվ իմունիտետը ձևավորվում է բուժիչ շիճուկի ներարկման արդյունքում
6. վեգետատիվ նյարդային համակարգի պարասիմպաթիկ բաժնի գրգռումն ուժեղացնում է արթենալինի արտադրությունը

**57**

## Նշել բոլոր սխալ պնդումները.

1. X քրոմոսոմը կոչվում է իգական քրոմոսոմ
2. գուազի ձկնիկի պոչալողակի գունավորումը X քրոմոսոմի հետ շղթայակցված հատկանիշ է
3. հիբրիդների առաջին սերնդում 1:1 հարաբերությունն ըստ ֆենոտիպի ստացվում է այն դեպքում, եթե ծնողական առանձնյակներից մեկը հոմոզիգոտ է՝ ըստ ուղեսիվ ալելի, մյուսը՝ հետերոզիգոտ
4. ասիմետրիկ տրանսլոկացիայի դեպքում մի քրոմոսոմի ցենտրոմեր պարունակող հատվածը միանում է մյուս քրոմոսոմի ցենտրոմեր չպարունակող հատվածի հետ
5. միևնույն ծնողների երեխաների գենոտիպային և ֆենոտիպային բազմազանությունը հիմնականում համակցական փոփոխականության արդյունք է
6. հատկանիշի մոդիֆիկացիոն փոփոխականության սահմաններն անվանում են նրա ուսակցիայի նորմա

**58**

## Նշել բռչուններին վերաբերող բոլոր սխալ պնդումները.

1. կտուցի ձևը համապատասխանում է սննան առանձնահատկություններին
2. կողերը կրծոսկրին միացած են անշարժ
3. սիրտը քառախորշ է
4. ողնաշարը կազմված է հինգ բաժիններից
5. կրծքի մեծ մկանները մասնակցում են թևերի իջեցմանը
6. կրնկաթաթն առաջացել է նախաբազկի մի քանի ոսկերի միաձուլումից
7. ձախ փորոքից դուրս է գալիս առտայի ձախ աղեղը

(59-60) 1 մոլ գազը զբաղեցնում է 22,4 լիտր ծավալ: 70 մ<sup>2</sup> տերևային մակերևույթ ունեցող ծառը 30 օրվա ընթացքում 16-ժամյա լուսային օրվա պայմաններում՝

**59** Զանի՞ լիտր քրվածին է արտադրել այդ ընթացքում:

**60** Զանի՞ լիտր CO<sub>2</sub> է կլանել այդ ընթացքում:

(61-62) Զերմանառազայթմամբ մաշկի միջոցով հեռանում է զերմության մինչև 60%-ը, իսկ գոլորշիացմամբ՝ զերմության 20%-ը: Մարմնի մակերեսից գոլորշացել է 300 գրամ քրտինք:

61

Քանի՞ Զոուլ էներգիա հեռացավ օրգանիզմից քրտինքի գոլորշիացման հետևանքով, եթե 1 գրամ քրտինքի գոլորշիացման համար ծախսվում է 2,45 կՋ էներգիա:

62

Քանի՞ կՋ էներգիա է հեռացել օրգանիզմից զերմանառազայթմամբ:

- (63-64) Փոքր լճակում ձկան քանակը որոշելու համար բռնվել է 3000 ձուկ, նշվել և նորից բաց թողնվել լիճ: Որոշ ժամանակ անց բռնվել է 2000 ձուկ, որոնցից 2,5%-ը նշված էին:

63

Զանի<sup>o</sup> հազար առանձնյակ են միավորված տվյալ պոպուլյացիայում:

64

Որոշել տվյալ պոպուլյացիայի խտությունը (առանձ/ $m^3$ -ով), եթե լճի ծավալը 800  $m^3$  է:

(65-66) Գլուկոզի մեղման պրոցեսում օքտագործվել է 36 մոլ  $O_2$ , և առաջացել է 268 մոլ  $H_2O$ :

65 Քանի՞ մոլ կաթնաբթու է մնացել այդ ընթացքում:

66 Քանի՞ մոլ  $CH_4$  է առաջացել այդ ընթացքում:

- (67-68) Օրվա ընթացքում մարդն արթուն է եղել 14 ժամ և ծանր ֆիզիկական աշխատանք է կատարել 4 ժամ: Ընդունել, որ ֆիզիկական աշխատանքի ընթացքում շնչառական շարժումներն արագացել են 1,5 անգամ, շնչառական օդի ծավալը մեծացել է 1,05 անգամ, և օրգանիզմում յուրացվող թթվածնի ծավալն ավելացել է 25%-ով: Հարաբերական հանգստի վիճակում մարդը 1 րոպեում արթուն ժամանակ կատարում է 16 շնչառական շարժում:

67

Զանի<sup>o</sup> լիտր թթվածին է ներշնչել մարդը հարաբերական հանգստի վիճակում:

68

Զանի<sup>o</sup> լիտր թթվածին է յուրացրել օրգանիզմն աշխատանք կատարելիս:

**69**

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից մեկը.

1. բջջակորիզը բջջի ամենափոքր օրգանոիդն է. այն առկա է բոլոր կենդանի օրգանիզմների բջիջներում
2. շնայած, որ կաթնասունների էրիթրոցիտներում կորիզ կա, դրանք պրոկարիոս բջիջներ են
3. կորիզակյութն իր քիմիական կազմով տարբերվում է ցիտոպլազմայից
4. քրոմատինը Դ-ՆԹ-ի, ի-Ո-ՆԹ-ի, փ- Ո-ՆԹ-ի, հիստոնային և ոչ հիստոնային սալիտակուցների բարդ համալիր է
5. կորիզաքաղանքը և կորիզակները տեսանելի են միայն բաժանվող բջիջներում
6. կորիզաքաղանքը կազմված է երկու թաղանքից, որոնց միջև կա կիսահեղուկ նյութով լցված տարածք

**70**

Մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից մեկը.

1. օքսիհեմոգլոբինն առաջանում է արյան շրջանառության փոքր շրջանի մազանոթներով հոսող արյան էրիթրոցիտներում
2. շնչառական համակարգի աշխատանքը կարգավորող կենտրոնները գտնվում են երկարավուն ուղեղում, ուղեղիկում, մեծ կիսագնդերի կեղևում
3. միջոկողային մկանների կծկման ժամանակ կողոսկրերը բարձրանում են
4. թոքերը կրծքավանդակին միացնող մկանների կծկման շնորհիվ թոքերը հետևում են կրծքավանդակի պատերին, և տեղի է ունենում ներշնչում
5. թոքերը պատված են հարթ մկանային հյուսվածքի միաշերտ թաղանքով, որը նպաստում է թոքերի կծկմանը և ընդարձակմանը
6. խոսելիս ձայնալարերը մոտենում են միմյանց